68. ԿԻԿՈՍԸ

Մի մարթ ու կնիկ են ըլըմ, իրեք ախչիկ են ունենըմ։ Դրանց հերը գնըմ ա հանգը, մերն էլ հաց թխելիս ա ըլըմ։

Վենձ ախչըկանը ղրգըմ ա ջուրը, ասըմ ա.— Գնա՛ ջուր ըլի խմոր ունցենք։

Վենձ ախչիկը գնըմ ա։

Ախպիրը ձորըմը ծառի տակին ա ըլըմ, կուժը կիսատըմ ա, մին էլ ծառին ա մտիկ անըմ, տակին էլ մի վենձ քար ա ըլըմ, էդ քարն էլ որ տենըմ ա, միտկն ա անըմ, ասըմ ա.— Բա որ ես գնամ մարթի, բերեմ մի որթի, անըմը դնեմ Կիկոս, փափախը կարեմ պոպող, գա էս ծառին վեր ըլի, քարի վրեն վեր ընգնի, ի՞նչ թավուր մեր ըլի որ լաց չըլի— վա՛յ, քոռանամ ես, Կիկոս ջան։ Էդ կրակի էկածն ասըմ ա ու լաց ա ըլըմ։

Մերը որ տենըմ ա եդացավ, միչնեկ ախչըկանն ա ղրդըմ, ասըմ ա.— Գնա տես ի՞նչ էլավ էն կրակի էկածը, խմորն ունցելու մնաց։

Միչնեկը դալիս ա, տենըմ վենձ քիրը մաղերը փետրըմ ա ու լաց ըլըմ։

Ասըմ ա.— Խի՞ես լաց ըլըմ, քիրա ջա՛ն։

Ասըմ ա.—Ախչի, ի՞նչ թավուր անջիգյար մոքիր ես, որ մի կաթիլ ըրտասունք էլա ըրեվըմ չի քու աչկերին։

Ասում ա.— Խի, խի՞, ի՞նչ ա էլել։

Ասում ա.— Ախչի, բա որ ես գնամ մարթի, բերեմ մի որթի, անըմը դնեմ Կիկոս, փափախը կարեմ պոպոզ, գնա էս ծառին վեր ըլի, քարի վրեն վեր ընգնի, բա ի՞նչ թավուր քոռացած մեր ու մոքիր պտին ըլիլ, որ լաց չի ըլին։

Էդ մի քիրն էլ ա նըստըմ նրա կոխկին, մազերնին փետըմ են ու լաց ըլըմ, ասըմ. վայ, Կիկոս ջա՜ն, վա՜յ (ա՜յ չոռը ձեզ, կրակի գաք դուք)։

Մերը որ տեսնըմ ա էն մինն էլ գնաց, էկավ ոչ, հմի էլ պուճուրին ա ղրգըմ (պուճուրն էլ որն ա, չիմն էլ իրար եղնա հասած ախչըկերք են)։ Նա էլ ա գնըմ, նրանց հնգերանըմ, էն քարի վրա ազի ըրտասունք են վեր ածըմ, վայնասուն տալի։

Մերը որ տեսնըմ ա իրեքիցը մինն էլա եդ չի էկան, հմի էլ ինքն ա գալի։

Ասըմ ա.— Տո՛ քոռանաք դուք, խմորը եդացավ, էդ ի՞նչ բանի նք։

Դրանք իրեքն էլ ասըմ են.— Ախ նանի, դուն էդ ի՞նչ թավուր տատ ես, էդ ի՞նչ թավուր չոր-քար սիրտ ունիս, որ քու թոռի մեյիդի վրա ուզըմ չես մի կաթիլ ըրտասունք վեր ածես։

Ասըմ ա.— Էդ ի՞նչ եք ասըմ, ա՜, շաշվիք ոչ դուք։

Էն վենձ քիրը հայհա մազերիցը քաշըմ ա ու ճչըմ, էն էրկուսն ասըմ են.— Նանի ջան, նանի, բա որ մեր քիրը գնա մարթի, բերի որթի, անըմը դնի Կիկոս, փափախը կարենք պոպոզ, գա էս ծառին վեր ըլի, քարի վրեն վեր ընգնի, ի՞նչ թավուր տատ ըլի, որ ջիգյարը կտրատվի ոչ։

Ասըմ են ու եդ սնքռնքըմ վայնասունի տալի։

Մերներուն էլ դրանց հետ նստըմ ա, մազերը քանդըմ, ձքձքոտըմ, լաց ըլըմ, ասըմ.— Վա՜յ, Կիկոս ջան, վա՜յ, բալա ջան։

Ըտիան մի մարթ ա անց կենալիս ըլըմ, ասըմ ա.— Էդ խի՞ եք լաց ըլըմ։

Ասըմ են.—Բա ի՞նչ թավուր մեր, մոքիր ու տատ տին ըլիլ, որ իրանց բալի վրա մխկտան ոչ։

Ասըմ ա.— Էդ ի՞նչ եք ասըմ, հսկանըմ չեմ։

Մերներուն ասըմ ա.— Ճամփորթ ախպեր ջան, բա որ իմ վենձ ախչիկը գնա մարթի, բերե մի որթի, անըմը Կիկոս, փափախը պոպոզ, գա էն ծառին վեր ըլի, քարի վրեն վեր ընգնի, ի՞նչ թավուր մեր, մոքրնի ու տատ տին ըլիլ, որ լաց չի ըլին։

Ասըմ ա ու եդ ձեն-ձենի են տալիս— Վա՜յ Կիկոս ջան, վա՜յ...

Էն մարթը դրանց վրա մտկըմը ծիծաղըմ ա, եդնա ղնամիշ ա անըմ, ասըմ ա.— Բան չի կա, բան, գնացեք տուն, ձեններուդ կտրեցիք։

Տենըմ ա իլլաջ չի ըլըմ. վայնասուններուն կտրըմ չեն, ասըմ ա.— Տհննցով ձեր կորածը գտնուլ չեք, գնացեք մի ապրանք մորթեցեք, հաց թխեցեք, քելեխ տվեք խալխին, ֆոքսը տեհեք։ Դրանք անգամ են գնըմ էն մարթին, գնըմ են, մի եզն են ունենըմ, մորթըմ են, հաց են թխըմ, քելեխ են ուտացնըմ։

Ըրիգոնը մարթը տուն ա գալի, եզան գլուխը ընդի տենըմ ա, ասըմ ա.— Ախչի էդ ի՞նչ ա էլել էդ եզանը։

Էնա ասըմ են.— Սհե՛, սհե՛. մեր Կիկոսի ֆոքսն ենք տվել։

Էդ մարթը կտաղըմ ա, ասըմ ա.— Տո շաշ ու գժեր. ի՞նչ Կիկոս, ի՞նչ բան, Կիկոսը ո՞ր ջհանդամիցն ա բլլմիշ էլել, որ դուք նրա համար քելեխ եք արել։

Դա ուշունց ա տալի, կուվըմ ա, հմա նոր էլ ի՞նչ։

Ասըմ ա.— Ընդուր են ասել «Կնգա մաղը երդեն ա. խելքը կարճ» է։

Եդնա էդ մարթը միտկն ա անըմ, ասըմ ա.— Հլա ընամ տենամ ուրիշ տեղ էլ կա շաշ, թե հլե մենակ սհանք են։

Գնըմ ա, գնըմ, գնըմ ա տենըմ հրե ջրըմը մի կնիկ ոտները լվանըմ ա։ Դրան որ տենըմ ա, ասըմ ա.— Էդ ո՞ւր ես գնըմ, ախպեր ջան։

Դա չարացած ա ըլըմ, խոսըմ չի։ Եդ մին էլա հարցնըմ։

Տենըմ ա, որ շատ զահլեն տարավ, ասըմ ա.— Ջհանդամն եմ գնըմ, քանի՞ զահլես տանիս։

Ասըմ ա.— Դե, ախպեր ջան, որ գնըմ ես ջհանդամը հա, իմ մերը ջհանդամըմն ա, առ էս փողը, տար իրան տուր։

Էդ մարդը եդ անգամ դնելիս չի ըլըմ, գնըմ ա։

Դա եղնեն վազ ա տալի, փողը դեմ ա անըմ, ասըմ ա.— Քի շատ եմ խնթրըմ, իմ մերը ջհանդամըն ա գնացել, տար էս փողն իրան տուր։

Էդ մարթը մտկումն ասըմ ա.— Ընդուր են ասել «Շաշը ման գալով դգնիլ չես», հրես մի շաշ էլ իրա ոտով էկավ ինձ ջհեց։ Սոա հերն էլ անիծեմ, հազիր փող ա, վեր ունիմ, տանիմ եղն առնիմ։

Էդ կնիկն էլ էն մարթի կնիկն ա, որը որ էն իրեք քվորն ու մորը լաց ըլելիս տեհավ, ասավ.— Գնացեք քելեխ արեք։

Էդ կնիկը գնըմ ա տուն, իրա մարթին ասըմ.— Իմ նանի համա փող ղրգեցի։

Ասըմ ա.— Տո շաշ քյոփողլի, քու նանը մեռած ա, ո՞նց թե պու նրա համա փող ղրգեցիր։

Ասըմ ա.— Մի մարթ դներ չհանդամը, իմ նանի կուշտը, փողը տվի, որ տանի իրան տա։

Էդ մարթը կտաղրմ ա, դրան մի քանի ճիպոտըմ, եդնա իրա ձիուն վեր ա ըլըմ, որ դնա էն մարթի եդնա հասնի, բալի փողը խլե։ Էն մարթը տենըմ ա, որ հրես, մինը ձիով իրան եդնա քշած գալիս ա։ Դա դնըմ մտնըմ ա Արշադի ջաղացը[1]։ Նա գալիս ա դռանը ձին կապըմ ա, մտնըմ ա ջաղացը որ բռնե մթամ։ Հլե ինքը ջաղացն ա մտնըմ, նա ցրթոնովը դուս ա գալի, գալիս ա ձին էլ եդ ա անըմ, վեր ա ըլըմ ու դբա Զարդախլուն փախչըմ ա, մտնըմ ծմակը[2]։ Նա ջաղացըմը ման ա գալի, տենըմ ա դդնըմ չի, դուս ա գալի։ Գալիս ա տենըմ ձին էլ չի կա, փոր ու փոշման տուն ա գալի։ Նա էլ ձիուն վեր էլած գնըմ ա Զարդախլըվի ծմակովը պատ տալի, գալի իրանց տուն։

Կնդանն ասըմ ա.— Ես հե դիգեի մենակ դուք եք շաշ, ձեզանից շաշերն էլ կան։

---

1 Աթան գյուղում Արշակ Քոչարյանի ջրաղացն է—Ծ. Բ.։

2 Աթան գյուղի մոտ անտառի բացատ է, Արշակի ջրաղացի ոիմաց—Ծ. Բ.։